Արձանագրություն

Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի Գնահատող հանձնաժողովի

*29.04.2024թ.*

*Ներքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետություն,*
*Երևան 0025, Նալբանդյան 130, ժամը՝ 16:30*

<u>Գնահատող հանձնաժողովի կազմ</u>

| | |
|---|---|
| Արփինե Սարգսյան | ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ) |
| Արմեն Ղազարյան | ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ |
| Լիանա Թովմասյան | ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական |
| Արշակ Քերոբյան | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ |
| Արթուր Պետրոսյան | ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության վիզաների բաժնի պետ |
| Անդրանիկ Նանագյուլյան | ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակից |
| Վաղինակ Բաղդեյան | ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակից |

| | |
|---|---|
| Ներսես Երիցյան | «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ) |
| Լեոնիդ Ավետիսյան | «ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն (համաձայնությամբ) |
| Սիրան Եգանյան | ՀՀ կենտրոնական բանկի գնումների համակարգման ծառայության ղեկավար (համաձայնությամբ) |
| Նելլի Դավթյան | ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար) |

Նիստին մասնակցում էին Գնահատող հանձնաժողովի բոլոր 10 անդամները, մեկը՝ (Լիանա Թովմասյան) հեռավար:

Քննարկվեցին 07.03.2024թ. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2346-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 350-Ա որոշմամբ հայտարարված Ընտրության ընթացակարգի որակավորման հայտերը, դրանց առանձին բաղադրիչների համապատասխանությունը որակավորման չափորոշիչներին ինչպես տեխնիկական պահանջների մասով, այնպես էլ ֆինանսական:

Նիստի ընթացքում հայտատուների որակավորման հայտերում արձանագրվեցին որոշ անհամապատասխանություններ որակավորման հարցման պահանջների նկատմամբ:

Քվեարկության դրվեց մինչև ս.թ. մայիսի 8-ը նիստը կասեցնելու հարցը, միաժամանակ քարտուղարի միջոցով նույն օրը արձանագրված անհամապատասխանությունների մասին հայտատուներին ծանուցելու միջոցով առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել դրանք:

Լ.Թովմասյանի կապը մինչև քվերակությունը ընդհատվեց, վերջինս չմասնակցեց քվեարկությանը:

*Քվեարկությանը մասնակցող բոլոր անդամները կողմ քվեարկեցին:*

Որոշվեց

Նիստը կասեցնել մինչև ս.թ. մայիսի 8-ը, միաժամանակ քարտուղարի միջոցով նույն օրը արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցել հայտատուներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել դրանք:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել 2024 թ-ի մայիսի 10-ին ժամը 16:30-ին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում (Երևան 0025, Նալբանդյան 130):

| | | |
|---|---|---|
| Արփինե Սարգսյան | ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ) | (ստորագրություն) |
| Արմեն Ղազարյան | ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ | (ստորագրություն) |
| Լիանա Թովմասյան | ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական | |
| Արշակ Քերոբյան | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ | (ստորագրություն) |

| | | |
|---|---|---|
| Արթուր Պետրոսյան | ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության պետի պաշտոնակատար | (ստորագրություն) |
| Անդրանիկ Նանագուլյան | ՀՀ ազգային անվտանգության ծառայութան աշխատակից | (ստորագրություն) |
| Վաղինակ Բադեյան | ՀՀ ազգային անվտանգության ծառայութան աշխատակից | (ստորագրություն) |
| Ներսես Երիցյան | «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն | (ստորագրություն) |
| Լեոնիդ Ավետիսյան | «ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն | (ստորագրություն) |
| Սիրան Եգանյան | ՀՀ կենտրոնական բանկի գնումների համակարգման ծառայության ղեկավար | (ստորագրություն) |
| Նելլի Դավթյան | ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար) | |